ԴՈՓՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏԱՆ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԳԵՂԱՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

XIII դ. արշալույսից Արևելյան Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքում աչքի ընկած Դոփյան իշխանական տան ծագման հարցի շուրջ պատմագիտական գրականության մեջ հայտնվել են տարբեր կարծիքներ։ Խնդրո առարկա հարցով զբաղվողներից Եսայի կաթողիկոսը, Հ. Շահխաթունյանցը, Մ. Բարխուտարյանցը, Դ. Ալիշանը, Կարապետ եպիսկոպոսը և ուրիշներ այն կարծիքն են հայտնել, որ Զաքարյան Սարգիս մեծի դուստր իշխանուհի Դոփի ամուսինը եղել է Ղարա Գրիգորը։

Բ. Ուլուբաբյանը քննադատելով հիշյալ ուսումնասիրողներին և թյուրիմացության աղբյուրը համարելով Եսայի կաթողիկոսի 1718 թ. կազմած Դոփյան տան ճյուղագրությունը[1], *«ապացուցել» է, որ Դոփի ամուսինը եղել է ոչ թե Ղարա Գրիգորը, այլ Հասանը*[2], *զարմանալիորեն մոռացության տալով այն հանգամանքը, որ իրենից առաջ այդ կարծիքն են հայտնել անվանի բանասեր-պատմաբան Գ. Հովսեփյանը, ակադ. Հ. Մանանդյանը և տողերիս հեղինակը*[3]։ *Խնդրո առարկա հարցը քննելիս, անտեսելով նախորդ հետազոտողների կատարած աշխատանքը, Բ. Ուլուբաբյանը գրում է. «Այսքան երկար կանգ առանք Դոփի ամուսնու անվան աղավաղումների վրա, որովհետև ուսումնասիրողները և նույնիսկ Կարապետ եպիսկոպոսը, որ հատուկ ուսումնասիրություն է գրել Դոփյան տոհմաճյուղի մասին, Եսայի կաթողիկոսի մի հատիկ թյուրիմացությանը կառչած՝ չեն նկատել աղբյուրներում սփռված բազմաթիվ այնպիսի տեղեկություններ, որոնք տալիս են Դոփյան ճյուղի ճշգրիտ ակունքը»*[4]։ *Իրենից առաջ բոլոր ուսումնասիրողներին, առանց բացառության, մեղադրելով «Դոփյան ճյուղի ճշգրիտ ակունքը» հավաստող փաստեր չնկատելու մեջ, որքան էլ տարօրինակ է, Բ. Ուլուբաբյանը վկայակոչում է տվյալներ, որոնք տակավին 1913 թ. օգտագործել է Գ. Հովսեփյանը, իսկ հետագայում Դոփյանների պատմությանն անդրադարձած ուրիշ ուսումնասիրողներ։ Բ. Ուլուբաբյանն իր «նորույթը» հիմնավորելու համար վկայակոչում է Գ. Հովսեփյանի կողմից 1951 թ. հրատարակված հիշատակարաններից մեկը, որը դեռևս 1969 թ. օգտագործել ենք նաև մենք, Դոփյանների մասին վերը հիշատակված մեր հոդվածը գրելիս։*

1244 թ. ինքնագիր հիշատակարանում Գրիգոր իշխանը՝ Հասանի և Դոփի որդին, խոսելով մոնղոլների արշավանքին իր մատնակցության մասին, գրել է «Եւ ապա սակաւիկ մի թողացուցեալ նահանգիս մերոյ և նուաճեալ ի ծառա-(յ)ութիւն եւ ընդեանց զիշխանս և զհեծեալազաւրս ընդ ինքեանս տանէին ուր և երթային. ընդ տրս և գրաւեցայ ես՝ Գրիգոր՝ որդի Հասանայ և Դոփին, քոսե-

---

1 *Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 821, թ. 2ա, բ։*

2 *Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975, էջ 154—155։*

3 Г. Овсепян, Потомство Тарсаича Орбеляна и Мина-Хатуни («Христианский Восток», т. II; СПб., 1913, с. 222—224), *նույնի՝ Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 20, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. գ. Երևան 1977, էջ 165, Գ. Ե. Կիրակոսյան, Մատենագիտական տեղեկություններ Դոփյանների մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 1, էջ 217—218)։*

4 *Բ. Ա. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 154։*

բորդի սպարապետացն Հայոց և Վրաց՝ Զաքարիայի և Իւանէի»[5]։ Արդ, հարց է ծագում. ինչպես կարող էր մեծավաստակ հայագետ Գ. Հովսեփյանը հրատարակել այս հիշատակարանը և չնկատել Դոփյանների ծագումը հավաստող այդ հանրահայտ փաստը։ Ինչպես արդեն ասվեց, նա այդ մասին խոսում է դեռևս 1913 թ. հրատարակած Օրբելյաններին նվիրված հոդվածում, իսկ հետագայում՝ Խաղբակյաններին նվիրված հիմնալից աշխատությունում[6]։

Թերևս հարկ չլիներ կրկին անդրադառնալու այս հարցին, եթե Բ. Ուլուբաբյանը Դոփյանների տոհմածառում թույլ չտար որոշ սխալներ։ Արդ, ո՞վ էր Դոփի ամուսին Հասանը և ինչ տոհմից էր սերում։ Ըստ Բ. Ուլուբաբյանի, Հասանը սերում էր Հաթերքի իշխաններից. նա Վախտանգ իշխանի որդին էր և Սակռի եղբայրը։ 1182 թ. Դադի վանքում թողած իր արձանագրությունում Վախտանգի որդի Հասանը հայտնում է, որ ինքը կառավարել է 40 տարի, ունեցել է վեց որդի, իր բերդերն ու գավառները տվել է նրանց և ինքը կնոջ՝ Մամայի հետ եկել է Դադի վանք, իր եղբայր Գրիգորի մոտ և դարձել կրոնավոր[7]։ Այս նույն փաստը հաստատում է նաև Հասանի կնոջ՝ Կյուրիկե թագավորի դուստր Մամայի՝ Դադի վանքում 1182 թ. թողած արձանագրությունը[8]։ Հասանի վանք մտնելուց հետո իշխանական տան ավագությունը անցել է նրա Վախտանգ որդուն, որը կառավարել է 1182—1214 թթ.։ Վախտանգը ունեցել է երկու որդի՝ Հասան և Տեր Գրիգոր։ Վախտանգի կնոջ՝ Արզու խաթունի, 1214 թ. արձանագրությունից պարզվում է, որ նրանց երկու որդիներն էլ մահացել են երիտասարդ հասակում։ Արզու խաթունն ի հիշատակ իր որդիների և ամուսնու Դադի վանքում կառուցել է եկեղեցի, որին նվիրել է գյուղեր ու ագարակներ։ Այդ առթիվ թողած արձանագրությունից պարզվում է, որ Հասանը՝ Վախտանգի և Արզու խաթունի ավագ որդին, մահացել է օտարների դեմ պատերազմում, որից երեք ամիս հետո մահացել է կրտսեր որդին՝ տեր Գրիգորը[9]։ Այս Հասանը Դոփի ամուսինը լինել չէր կարող, որովհետև արձանագրության բովանդակությունից պարզվում է, որ նա ամուսնացած չի եղել։ Բ. Ուլուբաբյանը գրում է, որ Դոփի որդի Գրիգորի 1244 թ. հիշատակարանում հիշված Հասանը կարող էր լինել միայն ու միայն Վերին Խաչենի Վախտանգ իշխանի որդին և Սակռի եղբայրը[10], սակայն այս միտքը հաստատող որևէ փաստ չի բերում։

Դոփի ամուսին Հասանն ապրել ու գործել է XII դ. երկրորդ կեսին և XIII դ. սկզբին։ Նա դեռ ապրում էր, երբ նրա եղբայր Հովհաննեսը 1204 թ. կառուցել տվեց Խադարի վանքի եկեղեցին. «Ի:ՈԾԳ: (1204) թուիս. ես տր. Յոհանէս շինեցի զեկեղ/եցիս եւ ժողովեցի զխաչ եւ զգիրք որ ի սմա եւ արկ/ի դՋոթացն այգին եւ զՄատաղիսն բազում աշխատութբ/. եւ ետու զվանքս իւր ամէն սահմանաւ իմ աւագ աղբաւրն Հասանա եւ իւր որդեացն Հաթերքո տեառնն միջնորդութբ...»[11]։ Այս նույն եկեղեցու պատին արձանագրություն է թողել նաև Հասանը. «Յանուն այ. այս իմ գիր է Հաս/անա, որ երբ իմ աղբէրս զեկեղեցիս շինեաց ու զվանքս ինձ եռետ, ես զԽնձորոբակս իւր սահմանովն ի յե-

---

5 Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ.՝ Ա, Անթիլիաս, 1951, էջ 959։

6 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, էջ 19—20։ Նույնի՝ Потомство Тарсанча Орбеляна и Мина-Хатуни, с. 222—224.

7 Հ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842, էջ 361—362, «Դիվան հայ վիմագրության», պրակ V, կազմեց Ս. Բարխուդարյան (այսուհետև «Դիվան», V), Երևան, 1982, էջ 138։

8 Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 361—362, «Դիվան», V, էջ 215։

9 «Դիվան», V, էջ 199, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., էջ 356, Մ. Բարխուտարյանց, Արցախ, Բագու, 1895, էջ 204—205։

10 Բ. Ա. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 155։

11 «Դիվան», V, էջ 121, Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 194։

կեղեցիս տուի...»[12]։ Արձանագրություններում ուշադրության է արժանի այն փաստը, որ Հովհաննեսը և Հասանը չեն հիշատակում հաթերքցիների հետ իրենց ազգակցական կապի մասին։ Հասանի արձանագրությունը թվական չունի, սակայն պարզ է, որ այն գրվել է 1204 թ., երբ Հովհաննեսը ավարտել է եկեղեցու կառուցումը։ Հովհաննեսի արձանագրությունում ուշագրավ է այն միտքը, որ նա վանքը իր սահմաններով եղբորն է հանձնել Հաթերքի տերերի միջնորդությամբ, իսկ դա նշանակում է, որ Հաթերքի Վախտանգ իշխանը պատրոնի իրավունք է ունեցել Հասանի և Հովհաննեսի նկատմամբ։ Այս միտքը անառարկելիորեն հաստատում է Վախտանգի կին Արզու խաթունի 1214 թ. թողած արձանագրությունը. «...ես Արզուխաթունս նուաստ աղախին Քի. դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին եւ ամուսին Վախտանկա թագաւորազնո տն. Հաթերքո եւ ամենայն Վերին Խաչենո...»[13]։ Վախտանգը մահացել է 1214 թ. իսկ մինչ այդ, ինչպես վերը տեսանք, նույն տարում մահացել էին նրա երկու որդիները՝ Հասանը և տեր Գրիգորը։ Ժառանգորդ չունեցող Հաթերքի Վախտանգ իշխանի տիրույթները անցան Իվանեին, իսկ վերջինս դրանք տվեց իր քրոջը՝ Դուփին։ Այդ մասին կա Վարդան վարդապետի մի վկայությունը. «Ի վեց հարիւր վաթսուն և եոթք (1214) թուին զՀաթերք յԻւանէ տուին տեարք նորա, զի մեռաւ Վաղթանգ բուն տէր նորա և որդիք իւր տարաժամ, և միւս Վաղթանգ Սակռեանց, փեսայն Իւանէի, տէր Ներքին Խաչենոյ»[14]։ Վարդան վարդապետի այս վկայությունը կարևոր է երկու առումով. նախ, որ Հաթերքի և Ներքին Խաչենի Վախտանգների միջև չկա ազգակցական կապ և ապա Սակռյաններ կոչվել են Ներքին Խաչենի իշխանները։ Սակայն Բ. Ուլուբաբյանը, որպեսզի իրական դարձնի Տարի և Ներքին Խաչենի իշխանական տների ազգակցական կապը, Վարդան վարդապետի խիստ պարզ ու հասկանալի միտքը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Մենք հակված ենք Վարդանի «միւս Վաղթանգ Սակռեանց»-ի մեջ «միւս»-ը վերագրել ոչ միայն Վախտանգին, այլև «Սակառյանց-ին, որով կհաստատվի, որ Վերին Խաչենի ճյուղը ևս հնում կոչում էր Սակռյանց, կամ այն Ներքին Խաչենի ճյուղից հատվածվել է Սակռ նախնուց սկսած»[15]։ Կարծում ենք, որ Վարդան վարդապետի վկայության՝ Բ. Ուլուբաբյանի կատարած վերահատուցումը անտեղի է, ուստի չի կարող կապ ստեղծել Դոփյանների ու Սակռյանների միջև։ Ինչպես վերը տեսանք, ո՛չ Հովհաննեսը և ոչ էլ Հասանն իրենց արձանագրություններում (1204 թ.) չեն հիշատակում, որ ունեցել են Վախտանգ անունով հայր և Սակռ եղբայր։ Ինքը՝ Սակռը ևս 1216 թվակիր իր արձանագրությունում չի հիշատակում, որ ունեցել է Հովհաննես և Հասան անուններով եղբայրներ. «Թիւն։ ՈԿԵ։ (1216). ես Սակռ որդի Վախտանգա կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստուած հոգո իմո և ետու զթղերկա այգին իւր հողով և կատապանաւ և Եղնանստին երկիրն ի սուրբ Գրիգոր Բերդաձորա և զԲախերին Մատաղիսն, և զՀաքեցանց երկիրն և։Ա։ չաղաց ի ժամատուն բե հոգո. փրկութիւն ամուսնո իմո, ի հայրապետութեանն տէր Յոհաննիսի...»[16]։ Սակռի այս արձանագրությունը գտնվում է Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի մոտ գտնվող մի խաչքարի վրա։ Նա մի արձանագրություն էլ թողել է Բերդաձորի ս. Գրիգոր եկեղեցին կառուցելու կապակցությամբ. «Թիւն։ ՈՀԴ։ (1224) էր. ես Սակռ, որդի Վախտանգ/ա, եղբայր Հասանա շինեցի զեկեղեցիս եւ ե/տու զորդի իմ զԳրիգոր/ս սպասաւոր...»[17]։ Սակռի այս երկու արձանագրությունները գրվել են Դոփի ամուսին Հասանի մահից բավական հետո, երբ Դոփը որպես Տարի

12 «Դիվան», V, էջ 122, Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 194, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 356։

13 «Դիվան», V, էջ 199, Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 204, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 356։

14 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», ի Վենետիկ, 1862, էջ 140։

15 Բ. Ա. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 158։

16 «Դիվան», V, էջ 114—115։

17 Նույն տեղում, էջ 116։

իշխանության իրավական տնօրեն ձեռք էր բերել մեծ համբավ։ Իսկ 1214 թ. Վախտանգի մահից հետո, ինչպես վերը ասվեց, Հաթերքի տիրույթները տրվել էին Իվանեին, որն իր հերթին դրանք հանձնել է իր քրոջը՝ Դոփին և նրա որդիներին։ Այս ժամանակներից էր, որ գրավոր աղբյուրներում Ծարի իշխանազուններն իրենց կոչեցին Դոփյաններ։ Հետևապես, եթե Սակոի եղբայր Հասանը Դոփի ամուսինը լիներ, ապա Սակոն այդ անպատճառ կնշեր։ Այս ամենից կարելի է հետևեցնել, որ Սակոի արձանագրություններում հիշատակված Հասանն ու Սակոը Դոփի հետ չեն առնչվում որպես ամուսին և տագր։ Մեր այս վարկածը հաստատում է նաև Սակոի որդի Գրիգորիսի՝ ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային պատի 1281 թ. արձանագրությունը, ուր Գրիգորիսը չի հիշատակում Դոփյանների հետ իր ազգակցական կապի մասին. «Յիշխանութեան բարեպաշտ արքային Զալալ Դաւլին եւ որդի իւր/ոյ Իւանոյ Աթաբակին, ես Գրի-[գորի]ս, որդի Սակոի վերստին շինեցի / զեկեղեցիս ի Թուին ։ՉԻ։ (1281)...»[18]։ Ինչպես վկայում է արձանագրությունը, խնդրո առարկա ժամանակաշրջանում Վաղուհաս և Բերդաձոր գյուղերը պատկանում էին Հասան-Ջալալյաններին։ Բ. Ուլուբաբյանի կազմած տոհմածառի Առանշահիկների ճյուղում կա XI դ. երկրորդ կեսին ապրած Վախթանգ-Սակո, որի որդիներն են Գրիգորը և Հասան կրոնավորյալը (1142—1182). սրանց ենթադրաբար կցված են Հասան Ծարեցին, Հովհաննես եպիսկոպոսը և Սակոը[19]։ Ըստ երևույթին, Բ. Ուլուբաբյանը երկմտությամբ Վախտանգ-Սակոի որդիներ է համարում Հասան Ծարեցուն, Հովհաննես եպիսկոպոսին և Սակոին։ Հաթերքի ճյուղը նա սկսում է այս Վախտանգ-Սակոով, որի զավակներն են Հասանը (կրոնավորյալը), Գրիգորը, Սըմբատը և Վահրամը[20]։ Այս ճյուղագրություններում նրանց այլևս ենթադրաբար կցված չեն Հասան Ծարեցին, Հովհաննես եպիսկոպոսը և Սակոը։ Հաթերքի ճյուղում կան Վախտանգներ, որոնցից ոչ մեկը, սակայն, Հասան Ծարեցու և Հովհաննես Եպիսկոպոսի հայրը չէ, իսկ Բ. Ուլուբաբյանի կազմած Ծարա ճյուղը սկսվում է XII դ. ապրած ոմն Վախտանգով, որը համարվում է Հասան Ծարեցու, Հովհաննես եպիսկոպոսի և Սակոի հայրը[21]։ Սակայն ինչպես արդեն տեսանք, արձանագրություններով այդ չի ապացուցվում։ Հասան Ծարեցին Վախտանգի որդին չէ և Բ. Ուլուբաբյանի փորձերը՝ նրան կապելու Հաթերքի ճյուղի հետ՝ սկզբնաղբյուրներով չեն հիմնավորվում։ Հետևապես, Դոփի ամուսին Հասանը Սակո անունով եղբայր չի ունեցել։ Նրա եղբայրն էր Հովհաննես եպիսկոպոսը։ Իսկ թե ի՞նչ ծագում ուներ Դոփի ամուսին Հասանը, այս հարցին առայժմ դժվար է ճշգրիտ և վերջնական պատասխան տալ։ Թերևս Հասանը զինվորական ծառայության մե՞ջ է եղել Զաքարյանների մոտ և աչքի է ընկել հավատարմությամբ։ Դրա համար էլ Զաքարյանները նրան արժանացրել են իրենց փեսայանալու պատվին և նորապսակներին շնորհել Վերին Խաչենը։ Միգուցե՞ Հասանը սերում է Վերին Խաչենի իշխանական որևէ ճյուղից, սակայն այս վարկածը ևս կարոտ է ապացուցման։ Ինչպես տեսանք, Հովհաննես եպիսկոպոսի Խաղարի վանքի արձանագրությունում ոչինչ չի ասվում նրա և Հաթերքի տերերի ազգակցական կապի մասին։ Եթե Հասանը սերած լիներ Հաթերքի Վախտանգյաններից, ապա նրա ժառանգները, կարծում ենք, այդ մասին կհիշատակեին, ինչպես վարվում էին առհասարակ Վախտանգյանները։

Հասանը վաղ է մահացել և նրա զավակների փոքրահասակության պատճառով իշխանության գործերը վարել է Դոփը։ Նույնիսկ այն ժամանակ, երբ նրա Գրիգոր որդին նշանավոր դեմք էր Արևելյան Հայաստանում, դարձյալ Դոփը հանդես էր գալիս մեծ իրավունքներով։ Դոփը 1225 թ. կառուցել է Խաղարի վանքի գավիթն ու մատուռը. «Թուին ։ՈՀԴ։ (1225) ես Դոփս, դուստր Սար/գսի, քոյր Զաքարէի եւ Իվանէի շ/ինեցի զգաւիթս եկեղեցոյս և զմա/տուռս եւ տվի

18 Նույն տեղում, էջ 116։ Արձանագրությունում Հասան-Ջալալը հիշվում է որպես ապրող, սակայն մենք գիտենք, որ Հասան-Ջալալը սպանվել է 1261 թ.՝ Արղունի կողմից։

19 Բ. Ա. Ուլուբաբյան, նշվ. աշխ., տոհմածառը։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում։

ղաւետարանս եւ Յանկաբա կուց երկիրն եւ զիմ հակուղենաց մատաղիսն՝ յեկեղեցիս՝ իմ հոգոյ...»[22] Հաղբատի մոտ գտնվող Քառասնից վանքի անթվակիր մի արձանագրությունից պարզվում է, որ Դոփի հրամանով ոմն Ջամալարինա միաբանել է վանքին. «Հրամանաւ պարոնացն և Դաւփէն ես Ջամալարինա միաբանեցա սբ. Քառասնից»[23]։ Թե մինչև երբ ապրեց Դոփը, հայտնի չէ։ Նրա մասին 1225 թ. հետո այլևս հիշատակության չենք հանդիպում։ Դոփը թաղված է Հաղբատի վանքում. Նրա տապանաքարին արձանագրված է. «Զաքարէի եւ Իւանէի քոյրն է Դաւփին»[24]։

Հասանը և Դոփն ունեցել են երկու որդի. Հովհաննես՝ եպիսկոպոս Սանահընի, ապա Հաղբատի և Գրիգոր՝ իշխան, որը մեծ դեր է խաղացել Վերին Խաչենի քաղաքական կյանքում։ Բ. Ուլուբաբյանը գրում է, որ Հասանի ու Դոփի զավակներից աղբյուրներում հիշատակվում են չորսը՝ Գրիգոր եպիսկոպոս Հաղբատի, Հովհաննես եպիսկոպոս Սանահնի, ապա Հաղբատի, Գրիգոր մեծ իշխանը և Գերգը կամ Գևորգը[25]։ Սակայն սկզբնաղբյուրների ուշադիր քննությունը մեզ բերում է այլ հետևության։ Աղբյուրներում հիշատակված Գրիգոր վարդապետը, որին Բ. Ուլուբաբյանը համարում է Հասանի ու Դոփի որդին, թերևս Ներշիսի որդեգրած զավակն է։ Խնդրո առարկա Գրիգորին Հ. Ղրիմեցին, Ալ. Երիցյանը, Կ. Կոստանյանցը, Հ. Մանանդյանը[26] և ուրիշներ նույնացրել են Գրիգոր Տուտեորդի Խաչենցու հետ և նրան չեն համարում Հասանի ու Դոփի որդի։ Սևորդյաց ձորում Գրիգոր վարդապետը խաչքար է կանգնեցրել, որի արձանագրության մեջ հայտնում է, թե ինքը Զաքարեի և Իվանեի քրոջ որդին է։ Այդ արձանագրությունը Ս. Ջալալյանցը և Կ. Ղաֆադարյանը վերծանել են որոշ տարընթերցումներով. «Ես տէր Յօհաննէս տնկեցի զայս տնյարկս մեծավ աշխատութեամբ և ի ՈԽԷ թուին ես Գրիգոր վարդապետ, քուէր որդի պատրոնացն նոր շինեցի ղայգիս և կանգնեցի զխաչս յառաջնորդութեան հայր Յովհաննէսի վասն յիշատակ նոցա և ինձ»[27]։ Կ. Ղաֆադարյանի վերծանածում չկա արձանագրության առաջին մասը. «Եւ ի ՈԻԷ (1178) թուին, ես Գրիգոր վարդապետ քուէրորդի պատրոնացն՝ նոր շինեցի զայգիս եւ կանգնեցի զխաչս յառաջնորդութեան հայր Յովանիսի՝ Վասն հիշատակի նորա և ինձ»[28]։ Արձանագրության բովանդակությունը հաստատում է, որ Գրիգոր վարդապետը իսկապես Զաքարեի և Իվանեի քրոջ որդին է, սակայն ո՞ր քրոջ։ Իր տեսակետը հիմնավորելու համար Բ. Ուլուբաբյանը վկայակոչում է Դադի վանքի մի խաչքարի վրա Գրիգորի թողած արձանագրությունը. «Թվին :ՈԼ: (1181) ես Գրիգոր քուէրորդի կան/գնեցի զխաչս եղբաւր իմո Գիո/րգա...»[29]։ Արձանագրությունից պարզ չէ թե ում քրոջ որդին է եղել այս Գրիգորը և չի նշվում նրա տոհմական

22 «Դիվան», V, էջ 127։

23 Ս. Ջ ա լ ա լ յ ա ն ց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 118։

24 Կ ա ր ո Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Հաղբատ, Երևան, 1963, էջ 185։

25 Բ. Ա. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն, նշվ. աշխ., էջ 160։

26 Յ. Ղ ր ի մ ե ց ի, Պատմութիւն հուշակաւոր Վանից Հաղբատայ Սուրբ Նշանին, Վիեննա, 1865, էջ 86, Ա լ. Ե ր ի ց յ ա ն, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա (1800—1832), Թիֆլիզ, 1894, էջ 213, Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց, Հայոց վանքերը, Մոսկվա, 1886, էջ 58, 60, Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 160։

27 Ս. Ջ ա լ ա լ յ ա ն ց, նշվ. աշխ., մասն Ա, էջ 80։

28 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 188։ Արձանագրության թվականը Կ. Ղաֆադարյանը սխալ է վերծանել, ճիշտը Ս. Ջալալյանցի վերծանածն է՝ ՈԽԷ, որովհետև ՈԻԷ (1178) թ. Լոռին դեռ Զաքարյաններին չէր պատկանում։ 1185/1186 թ. Թամար թագուհին Սարգիս Զաքարյանին նշանակեց ամիրսպասալար և նրան տվեց Լոռին («История восхваления венценосцев», груз. текст перевел, предисловием и примечаниями снабдил проф. К. С. Кекелидзе, Тбилиси, 1954, с. 41—42), տե՛ս նաև Ա. Ի. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն, Վահրամյանների իշխանության պատմությունից (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 4, էջ 104—105)։

29 «Դիվան», V, էջ 211, Բ. Ա. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն, նշվ. աշխ., էջ 169։

պատկանելությունը, հետևապես անվերապահորեն նրան Դոփի և Հասանի որդի համարելը ճիշտ չէ։ Բ. Ուլուբաբյանը գրում է, որ քանդակողը քարի վրա տեղ չլինելու պատճառով չի գրել Զաքարեի և Իվանեի անունները։ Անհասկանալի է նաև նրա այն միտքը, որ Գրիգոր վարդապետը եղել է Դադի վանքի հո-

գևորական, ուր կրթվել է ու դաստիարակվել[30]։ Իսկ ով էր խնդրող առարկա Գրիգորը, Սարգիս ամիրսպասալարի ո՞ր դստեր զավակն էր նա։ Հայտնի է, որ

30 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 169։

Սարգիս ամիրսպասալարի Նրջիս և Նանա դուստրերը ժառանգ չեն ունեցել և սխալ չի լինի, եթե Գրիգոր վարդապետին համարենք նրանցից մեկն ու մեկի որդեգրած զավակը։ Սկզբնաղբյուրների ուշադիր քննությունը մեզ բերում է այդ համոզմանը։ Այսպես, Հառիճի վանքում Գրիգոր վարդապետի 1235 թվակիր արձանագրությունը և Հովհաննավանքում Նանայի թողած արձանագրությունը հնարավորություն են տալիս ոչ միայն պարզելու Գրիգորի ինքնությունը, այլ նաև բացահայտվում են վաղամեռիկ ամուսիններ հիշատակը հարգելու հիասքանչ օրինակներ։ Նրջիսը և Նանան ծաղիկ հասակում զրկվելով իրենց ամուսիններից, զավակներ են որդեգրել և իրենց նվիրել նրանց դաստիարակության ազնիվ գործին։ Հառիճի վանքի արձանագրություններից մեկում կարդում ենք. «Ես Գրիգոր սնուցած մեծին Սարգսի դստերն Նրջիսին տուի աւետարան զուզաւք ի սուրբ Եկեղեցիս ողորմութեամբ ...իմոյ եւ հաստատեցին ի տարին գ աւր պատարագ. բ աւրն ինձ եւ ա աւրն Բանուհաշին ի թուիս ՈԶԳ (1234)»[31]։ Այս արձանագրությունը հրատարակել է նաև Ս. Ջալալյանցը. «Ես Գրիգոր սնուցած մեծին Սարգսի դստերն Նանայի...»[32]։ Խնդրո առարկա արձանագրությունում Սարգիս ամիրսպասալարի դստեր անվան տարընթերցումն էական նշանակություն չունի։ Կարևորն այն է, որ Գրիգոր վարդապետը եղել է Նրջիսի կամ Նանայի որդեգրած զավակը, որը վարդապետ է եղել Սանահնում ու Հազբատում, եղել է նաև Հառիճի վանքի առաջնորդը։ Այսպիսով, հերքվում է Բ. Ուլուբաբյանի այն միտքը, որ Գրիգորը եղել է Դաղի վանքի հոգևորականը։

Քույրերի և նրանց որդեգրած զավակների միջև ստեղծվել է ջերմ և հոգեհարազատ փոխհարաբերություն։ Այս իմաստով առավել խոսուն է Հովհաննավանքում Նանայի թողած արձանագրությունը. «...Ես Նանայս դուստր մեծ հազարապետին Սարգսի որդւոյ Զաքարէի որդւոյ Աւագ Սարգսի կանգնեցի ի վերայ նորակերտ վարդապետիս Մարգարէի, որ ի սկզբն աշակերտութեան իւրոյ որդիացաւ ինձ, եւ առաւել եղեւ քան զենունդ յորովայնի, եւ հոգայր զաւգուտն հոգւոյ իմոյ...»[33]։ Ահա այսպիսի ջերմ հարաբերություններ էին առաջացել նաև Գրիգորի և նրան որդեգրած Նրջիսի կամ Նանայի միջև, որը և նրան հիմքեր էր տալիս իրեն համարելու «քուէր որդի պատրոնացն»։

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մեկ այլ կարևոր հանգամանքի վրա ևս։ Հաղբատում թաղված Դոփյան իշխանական տան ժառանգների տապանաքարերի արձանագրություններից անթերի բայորեն երևում է նրանց պատկանելը Դոփյաններին և ազգակցությունը Զաքարյանների հետ։ Այսպես օրինակ, նրանց տապանաքարերի վրա կարդում ենք. «Զաքարէի եւ Իւանէի քվերորդին Յովհան(է)ս եպիսկոպոս տեղոյս»[34] կամ «Զաքարէի եւ Իւանէի քոյրն է Դաւիթն»[35]։ Սրանց կողքին թաղված է Գրիգորիսը, որին Բ. Ուլուբաբյանը համարում է Հասանի և Դոփի որդի[36], սակայն նրա տապանաքարին արձանագրված է երկու բառ, «տէր Գրիգորէս»[37]։ Նույն շարքում գտնվող տապանաքարերից մեկի վրա արձանագրված է. «Տէր Գրիգորէսի եղբայրն»[38]։ Ինչպես տեսնում ենք, տեր Գրիգորիսի և նրա եղբոր տապանագրերում ոչինչ չի ասվում Զաքարյանների հետ նրանց ազգակցական կապի մասին, իսկ եթե այն գոյություն ունենար, ապա անպատճառ կնշվեր, ինչպես դա արվում էր նրանց իսկական ազգակիցների տապանագրերում։ Այսպիսով, փաստերի համադիր քննությունից պարզվում է, որ Հասանը և Դոփը ունեցել են երկու որդի՝ Հովհաննես և Գրիգոր։ Դոփի հետ իշխանությունը վարած և նրան հաջորդած Գրիգոր իշխանի մասին առաջին հիշատակությունն առայժմ թվագրվում է 1224-ով։ Այդ թվականին

31 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 162։
32 Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., մասն Ա, էջ 214։
33 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1980, էջ 175։
34 Կարո Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 184։
35 Նույն տեղում, էջ 185։
36 Բ. Ա. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 160, 162։
37 Կարո Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 184։
38 Նույն տեղում, էջ 189։

Հասանի որդի Գրիգորը Դադի վանքին է նվիրել չորս տուն շինական[39]։ Սակայն Բ. Ուլուբաբյանը գրում է, որ Գրիգորի մասին առաջին տեղեկությունը վերաբերում է 1220 թ.[40], իր ասածը հաստատելու համար բերելով Խաղավանքի 1220 թ. մի կնեղծ արձանագրություն։ Ինչպես գրում է Բ. Ուլուբաբյանը, այն ինքն արտագրել է վանքի զանգակատան խորքի պատի մեջ գտնվող Գրիգոր իշխանի կանգնեցրած խաչքարից, որով նա հաստատում է իր ընծաները վանքին. «Թ. ՈԿԹ» (1220) «Ես Գրիգոր որդի Հասանա || տվի Ջարհի այգին || ... տ || վի ի Խաղարա վանս... Ե(5)աւր... իմ հոգոյ || ով խափանէ...»[41]։ Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ եթե հիշյալ Գրիգորը Հասանի ու Դոփի որդին լիներ, ապա այդ մասին անպատճառ կհիշատակեր, մեզ մնում է առնվազն զարմանալ, թե ինչպես խաչքար կանգնեցնող և արձանագրություն գրել տվող Գրիգորի հոր Վաճառամ անունը Բ. Ուլուբաբյանը դարձրել է Հասան։ Ահա այդ արձանագրությունը վաստակաշատ վիմագրագետ Ս. Բարխուդարյանի ընթերցմամբ. «Թվին ։ՈԿԹ։ (1220. ես Գրիգոր, որդի Վարհամա/տվի զԱրեւհատանց երկիրն Գորատափին այգին, տ/վի [ի] Խաղարի վանս, տարու/մն ։Ե։ աւր ժամ իմ հոգոյ/ս արարայք սբ. Գորգին»[42]։ Ի դեպ Ս. Բարխուդարյանը արձանագրությունը արտագրել է տչ թե զանգակատան խաչքարից, այլ եկեղեցուն կից կառուցված մատուռի արևմտյան պատից[43]։ Խաղավանքի զանգակատան պատերից Ս. Բարխուդարյանն արտագրել է ընդամենը երկու արձանագրություն, որոնք անթվակիր են և բոլորովին այլ բովանդակություն ունեն[44]։

Անհրաժեշտ ենք գտնում արձանագրության առաջին տողը տալ նաև հմուտ վիմագրագետ Ս. Տ. Սաղումյանի վերծանությամբ։



ԵՍ ԳՐԳ ՈՐ ՈՐԴԻ ՎԱՐՀԱՄ

Ինչպես տեսնում ենք, Ս. Տ. Սաղումյանի և Ս. Բարխուդարյանի ընթերցումները նույնական են։

Այսպիսով, ինչպես ապացուցում են փաստերը, խնդրո առարկա Գրիգոր վարդապետը ազգակցական կապերով չի կապվում Դոփյանների հետ։ Հասանը և Դոփը չէին կարող Գրիգոր անունով երկու որդի ունենալ։ Նրանց որդիներն են Հովհաննես եպիսկոպոսը և Գրիգոր իշխանը։

К ВОПРОСУ О ПРОИСХОЖДЕНИИ КНЯЖЕСКОГО РОДА ДОПЯН

ГЕГАМ КИРАКОСЯН

Резюме

В исторической литературе о происхождении княжеского рода Допян высказаны разные точки зрения. В источниках впервые о нем упоминается в XIII в., что исходит от имени сестры Закаре и Иване.

39 «Դիվան», V, էջ 201։
40 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 229։
41 Նույն տեղում, էջ 230։
42 «Դիվան», V, էջ 126։
43 Նույն տեղում։
44 Նույն տեղում, էջ 127–128։

Первоисточники дают скупые сведения и относительно происхождения и деятельности Асана, супруга Допи. Вероятно, Асан не имел княжеского происхождения. Он умер молодым и по этой причине наследники этого рода преемствовали его фамилию.

Параллельное исследование источников уточняет родоначало двух поколений этого княжеского рода. К числу этих источников в первую очередь относятся памятные записи армянских рукописей и эпиграфические надписи этого периода, в которых сохранились первые упоминания о роде Допян. Данные этих источников дают возможность составить представление о происхождении и родословной указанного рода. В надписи Григор ничего общего с родом Допян не имеет.